ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Mega Brand LLC-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/100 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմի լուսային համակարգը բաղկացած է կետային լուսարձակներից, երկգույն կետային լուսարձակներից, պրոֆիլային լուսարձակներից, գծային լուսարձակներից, լուսարձակ- ստրոբից, շարժական լուսարձակներից, ծխի մեքենաներից, ուղեկցող լուսարձակ իր ոտնակով, լույսի կառավարման ցանցային բաշխիչներից, լույսի կառավարման վահանակից, լույսի կառավարման վահանակի լրացուցիչ մաս՝ ստեղնաշարից, սենսորային մոնիտորից, լույսի կառավարման վահանակի լրացուցիչ մաս՝«ֆեյդերների թև»-ից, շարժական լուսարձակներից՝ «բիմ», հաղորդալարերից, միացման լարերից, բաշխիչներից, աքսեսուարներից հոսանքի անխափան սնուցման սարքավորումներից: Նշված սարքերը սարքավորումները և պարագաները պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Լրակազմի երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի: Լրակազմում նշված ապրանքների առանձին երաշխիքային ժամկետները սահմանված են համապատասխան տողերում: Լրակազմում նշված ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան

	մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Մատակարարի կողմից: Լրակազմում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում տրված են դրանց նվազագույն պահանջները (կամ առավելագույն պահանջները, եթե խոսքը գնում է բացասական ցուցանիշի մասին. բացասական ցուցանիշները նշված են մեկ աստղանիշով՝ «*»): Իսկ եթե ցուցանիշը սահմանում է միջակայք, ապա առաջարկվող ապրանքը պետք է ներառի ցուցանիշի նշված միաջակայքը: Եթե ցուցանիշը նշված է երկու աստղանիշով՝ «**», ապա ցուցանիշը պետք է պահպանվի նույնությամբ: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ, ինչպես նաև լինեն տարածված, այսինքն՝ տեխնոլոգիաները կիրառվեն 2-ից ավել արտադրողների կողմից: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Mega Brand LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/100 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	